

ԵԶԱԿԻԱԶԵՎ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ
ԴՐԱԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ,
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Հաճախ լեզվաբանական գրականության մեջ կարելի է հանդիպել այսպիսի սահմանման. «Գոյականի եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա»¹: Այս սահմանումը անկասկած պակասավոր է. սրանով չեն սահմանագծվում եզակի թիվ ունեցող գոյականի բառային և քերականական արժեքները: Թվակարգը, ընդ որում և եզակի ենթակարգը քերականական հատկանիշ է, կարգ, և սահմանումը պետք է բացահայտի նրա հենց այդ քերականական էությունը: Ավելորդ է խոսել այն մասին, որ եզակին ոչ թե առարկա է ցույց տալիս (բոլոր գոյականներին հատուկ է առարկայնության գաղափարը, իբրև նրանց համար բնորոշ բառմաստ), այլ խոսքային (դատողական) ոլորտում ներգրավված առարկաների քանակային հարաբերության հատկանիշը՝ մեկ և մեկից ավելի գոյականների թվակարգային հայեցակետի առաջին եզրը: Օրինակ

Ho capito la storia di santa Filomena, e' da un pezzo che se ne parla, ma chi glielo fa fare, ai preti, una chiesa dedicata a santa Filomena, un paese pieno di Filomene. (Leonardo Sciascia, Il mare colore del vino, p. 79).

Ցանկանալով շարունակել մեր պտուղտը՝ մենք իջանք դեպի ծորակն, ուր հոսում էր գյուղի լեռնային վտակը. չնայելով քրի փոքրության նա շարունակ խոխոջում, աղմուկ էր հանում: Մի ուրիշ տեղ մոշենին, վայրի վարդը կամ նռնենին, գետակի կրկին ափերը գրաված: (Մուրացան, Նոյի ագռավը, էջ 15):

He came to me and said he was a musical genius, and that he was going to have a child with a Miss Somebody or other. (Richard Aldington, Short Stories, p. 173).

Ինչպես ստորև կտեսնենք, եզակի թվի իմաստը եզակի բառածևի մեջ մշտապես տեղակայող կարգ չէ: Եզակի բառածևը բազմամշանակ, տարագործառությամբ է և՛ բառային իմաստավորումների տեսանկյունից, և՛ քերականական արժեքայնությամբ: Դեռևս հին քերականներն են նկատել, որ եզակի բառածևում առկա են քանակային (թվային) իմաստի անհամարժեքություններ, տարբեր ընդգրկումներ:

¹ Տես Patrik Svensson, Number and Countability in English Nouns, 1998, p. 143.

Եթե ասում են, թե եզակի թիվը ցույց է տալիս առարկայի եզակիությունը, մեկ հատ լինելը, ապա բնականաբար սա վերաբերում է այնպիսի գոյականներին, որոնք ունեն եզակի – հոգնակի հարաբերակցություն, հակադիր այդպիսի ձևեր, այսինքն՝ այդ գոյականները թվարկվող առարկաների անվանումներ են: Ըստ ակադ. Վ.Վինոգրադովի՝ գոյականի եզակի թվի կարգը միջոց է ծառայում «առարկայի» վերացարկված պատկերացման համար, իբրև կամ սեռի հասկացության արտահայտող և կամ ամբողջ դասը, տեսակը տեղակայող (փոխարինող ներկայացուցիչ)²:

Համամասն բնութագրության հանդիպում ենք պրոֆ. Գ.Սևակի մոտ, այն է՝ եզակի թիվը «ցույց է տալիս առարկան իբրև առարկա ընդհանուր կերպով և դրա հետ միասին իբրև այդ առարկայի ներկայացուցիչ կամ նմուշ մեկ հատ առարկան մասնավոր կերպով»³: Նկատելի է, որ ուշադրություն է հրավիրվում եզակի բառաձևում կատարվող բառիմաստային հնարավոր տեղաշարժերի վրա՝ մասնավորից դեպի ընդհանուր և հակառակը: Եզակի թվի ձևաիմաստային հատկությունների իր գնահատման մեջ ուրույն երանգներ է մտցնում ակադ. Է.Բ.Սլոյանը. «Եզակի թիվը որևէ նյութական ձևությամբ չի արտահայտվում, ուստի և գոյականների եզակին թվի տեսակետից ձևաբանորեն աննշույթ է... Եզակիի ձևերը քանակություն ցույց չեն տալիս, եզակին աննշույթ է ոչ միայն արտահայտության, այլև բովանդակության՝ իմաստի տեսակետից, ըստ որում կարող են ցույց տալ և՛ մեկ առարկա, և՛ առարկաների շատություն (եզակին հոգնակիի իմաստով), և՛ առարկաների բազմություն առանց քանակային բնութագրման (հավաքական գոյականներ), և քանակային բնութագրության բացակայություն առհասարակ (վերացական գոյականներ)»⁴:

Եզակի թվի բնութագրությունը, ինչպես տեսնում ենք զրեթե բոլոր նշված լեզուներում, էլնում է «եզակի ձև» գաղափարից և ոչ թե թվակարգի քերականական հայեցակետից: Բայց եզակի ձևը կարող է և չեզոք լինել թվակարգային հայեցակետի նկատմամբ, ըստ ինքյան չարտահայտել «միակի» լինելը:

Այս խնդիրը պարզաբանելու համար նախ քնենք բառիմաստային այն դրսևորումները, որոնք տեղ են գտնում բառի եզակի ձևում (կամ եզականաձև բառում):

Եթե ասվում է, թե եզակին կամ եզակի բառաձևը բազմանշանակ է, ապա սա չի նշանակում, թե եզակի քերականական (թվակարգային) իմաստը ևս բազմանշանակ է, սա անկասկած վերաբերում է բառիմաստային այն երևույթներին, որոնք կապված են բառի եզակի ձևի կամ եզականաձև բառի հետ:

² Տե՛ս В.Виноградов, Русский язык, М.-Л., 1947, с.158.

³ Գ.Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 276:

⁴ Է.Բ.Սլոյան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 249:

Մինչդեռ եզակիի թվակարգային իմաստը մեկն է. այն ներկայանում է իբրև մեկի և մեկից ավելիի քանակային հարաբերակցության հայեցակետի առաջին եզր:

Իսկապես, եզականածն գոյականը բազմիմաստ է. այն կարող է արտահայտել՝

ա) միասնեռ կամ միատեսակ առարկաների շարքի մեկ առանձին առարկան՝ կապված թվարկվողականության, բաժանականության իմաստների հետ,

բ) նույն կարգի առարկաների մի խումբ փոխաբերական – սինեկդոխային անցումով,

գ) ընդհանրացված, վերացարկված ձևով տեսակայնություն, ամբողջ տեսակը. այս դեպքում եզակին (առարկայի անունը) իր բովանդակությամբ տեղակայում է ամբողջ տեսակը, իբրև սրա ներկայացուցիչ,

դ) միասնեռ առարկաների ամբողջություն, բազմություն, իբրև դրանց հավաքական, բաժանվող, չտրոհված միասնություն,

ե) նյութայնություն – զանգվածայնություն,

զ) վերացականություն – ընդհանրականություն,

է) անհատականության տեսակայնության բացառումով, երբ միասնեռ առարկաներից մեկը դառնում է անհատական ընկալման օբյեկտ (հատուկ անուններ),

ը) անհատականություն բնության մեջ մեկ հատ կամ այդպիսին դիտված առարկան (հասկացությունը),

թ) թանձրացականություն (կոնկրետություն):

Այս ամենին պետք է ավելացնել այն, որ միևնույն եզակի բառածևը կարող է բազմիմաստ լինել կամ գործածվել փոխաբերական այլևայլ իմաստավորումներով:

Դժվար չէ մեկնաբանել եզակի թվի քերականական այն հատկանիշը, որով անհատ առարկան առանձնանում է նույն տեսակի այլ առարկաների շարքում մեկի և մեկից ավելիի քանակային հարաբերության հայեցակետով: Քանի որ նման դեպքերում գործ ունենք առարկաների դասի հետ, ուրեմն դասի մեջ բաժանականորեն առկա են առանձին անհատները, որոնցից յուրաքանչյուրը կարող է համարվել դասի, տեսակի ներկայացուցիչ⁵: Տվյալ դասը, տեսակը կազմող առարկաների տրոհականությունը այնպիսին է, որ հնարավորություն է տալիս թվարկել, հաշվել միավորների քանակը: Այսպիսի պարագաներում իմացականորեն միանգամայն հնարավոր է գիտակցել դասի և նրա ներկայացուցչի (տեսակի և անհատի, ամբողջի բազմության և նրա մի մասի) որոշակի առնչակցություն, զուգորդականություն, հոգեբանական հարաբերակցություն:

Պետք է նշել, որ խոսքի մեջ հնարավոր է, որ դասի (բազմության, տեսակի, ամբողջի) անունով ներկայացվի նրա առանձին անհատը, մասը: Ահա

⁵ Sbu՝ <http://www.languagelogs.plural.mass.collective>

թե ինչու եզականաձև միևնույն անվան մեջ առարկայական կոնկրետ վերաբերությունում մի դեպքում ներկայանում է անհատը, մի այլ դեպքում դրանց խումբը, իսկ մյուս դեպքում առարկայական վերաբերությունը տարածվում է ամբողջ տեսակի վրա: Արդյունքում ստացվում է, որ երեք լեզուներում էլ եզակի միևնույն ձևը ունի գործառնության երեք կիրառություն: Այս մեկնաբանությունը կարելի է ցուցադրել հետևյալ օրինակների վրա: *Շուճ (il cane, the dog)* եզակի ձևը վերցնենք հետևյալ արտահայտության մեջ. *“Il cane e` fedele”*, «*Շուճը հավատարիմ է*», *“The dog is faithful”*. Այս դեպքում *շուճ* եզակի բառածը նշանակում է *շուճ* առհասարակ: Այստեղ հավատարիմ լինելու հատկանիշի վերագրումը, ստորոգումը իմացականորեն տարածվում է *շուճ*-տեսակին ընդհանրապես: Մեկ այլ օրինակ՝ *“L'uomo e` mortale”*. «*Մարդը մահկանացու է*», *“Man is mortal”*. Այստեղ նույնպես մահկանացու լինելու հատկանիշի վերագրումը իմացականորեն տարածվում է *մարդ* տեսակին ընդհանրապես: Հայերենում քննարկենք հետևյալ օրինակը:

«Նա ոչխարը տարավ սար»: Այս արտահայտությունը կարելի է հասկանալ իր ուղղակի նշանակությամբ, այսինքն որ *նա մեկ* ոչխար է տարել սար: Փոխաբերական – սինեկդոխային իմաստավորումով *ոչխար* եզակին կարող է արտահայտել ոչխարի բազմություն, հոտ, որ բազմաթիվ ոչխարներից է բաղկացած: Սա միաժամանակ նշանակում է, թեև ոչ միշտ է, որ եզակին բացառում է բազմության գաղափարը: Դեռևս Հ.Պաուլսն ընդգծել է. «Նույնիսկ թեքական լեզուներում հոգնակի թվի քերականական արտահայտությունը պարտադիր է ոչ բոլոր այն դեպքերում, երբ նշվում է բազմություն: Այսպես, կան գոյականներ, որոնք հանդես գալով եզակի ձևով, ծառայում են որոշակի քանակ ցույց տալուն... Իրենց ծագումով եզակի գոյականներից են գալիս thousand «հազար», hundred «հարյուր» և հավանաբար նաև այլ թվականներ: Եվ ընդհանրապես այսպես կոչված հավաքական գոյականները իրենցից ներկայացնում են բազմության նշանակում (բազմություն են արտահայտում) եզակի ձևով»: Այս պարագայում խտալերենում և անգլերենում օգտագործվում է հոգնակի թիվը հավաքական բազմություն նշելու համար:

Ինչպես տեսնում ենք, եզակի բառածկի այս երեք դրսևորումներից երկուսը արտահայտում են միատեսակ առարկաների խումբ կամ տեսակային հատկանիշով ընդհանրություն: Միայն առաջին նշանակությամբ կիրառության դեպքում վերը նշված գոյականները արտահայտում են մեկի և մեկից ավելիի քանակային հակադրության առաջին եզրը: Իսկական թվակարգային եզակին սա է: Մյուս երկու դեպքերում մեկից ավելին ցույց տալու պատճառով այդ բառը միայն ձևականորեն է եզակիի եզրը ներկայացնում. իմաստով նա հոգնակի է⁶:

⁶ Ա.Պոտեբնյան նկատել է. «կոնկրետ գոյականի եզակին հոգնակիի համատարած պատկերն է» (տես նրա «Из записок по русской грамматике», III, т. 27):

Ահա թե ինչու այդ իմաստավորումների համար հոգնականաձև գործածություն կարող է լինել և կարող է չլինել: Օրինակ՝

L'uomo e' mortale
(Gli uomini sono mortali)

Մարդը մահկանացու է:
(Մարդիկ մահկանացու են):

Man is mortal.
(Men are mortal.)

L'uccello fa il suo nido in primavera.
(Gli uccelli fanno i loro nidi in primavera).

Թռչունը հյուսում է իր բույնը
գարնանը:
(Թռչունները հյուսում են
իրենց բույնը գարնանը):

A bird builds its nest in (the) Spring.
(Birds build their nest in (the) Spring).

Il leone e' mammifero.
(Leoni sono un mammiferi)

Առյուծը կաթնասուն է:
(Առյուծները կաթնասուն են):

The lion is mammal.
(Lions are mammal)

Այստեղ եզականաձև և հոգնականաձև կիրառությունները գործառական հակադրություն չունեն (հակադրությունների չեզոքացում)⁷:

Եզակին կարող է փոխաբերական այնպիսի իմաստավորումներ ունենալ, որոնք որոշակիորեն իրենցից կախման մեջ են դնում բառի թվակազմությունը, նրա (գործառական) դրսևորումը: Այսպես, օրինակ, հայերենում *ծաղիկ* բառը թվարկվող (հաշվելի) առարկայի անուն է իր ուղղակի՝ առաջնային նշանակությամբ ազատ հետևում է նման կարգի բառերի քերականական վարքագծին. *ծաղիկ – ծաղիկներ*: Սակայն այն գործածվում է իբրև հիվանդության անուն, իսկ հասկացության ծավալային նեղացումով՝ մաս անձնանուն կամ կենդանու անուն: Այս պարագայում արդեն եզականաձև բառը թվակարգային իմաստի նկատմամբ դառնում է չեզոք, հոգնակի ձևեր չի կազմում, հատուկ է անհոգնականներին:

Եզականաձև բառը հաճախ բազմիմաստ է, հոգնակի եզր կարող է ունենալ իր այն իմաստի համար, որը արտահայտում է թվարկվող (հաշվելի) առարկայի գաղափար: Այստեղ կարևոր չէ այն հանգամանքը, թե իմաստները միևնույն բառաձևում ինչ չափով են հեռացել միմյանցից: Օրինակ *գլուխ – գլուխներ* իմաստային հակադրությունը հայերենում և «կենդանու գլուխ» և «գրքի գլուխ» նշանակությունների համար, իտալերենում *capo – capi* և «կենդանու գլուխ» և «ղեկավար» նշանակություններով, անգլերենում *head – heads* նույն նշանակություններով կամ *լեզու – լեզուներ* *lingua – lingue, tongue – tongues* և «մարդկային խոսք», և՛ «կենդանու անատոմիական օրգանը» նշանակությունների համար:

Այսպիսով մեր ուսումնասիրության մեջ հանգում ենք այն եզրակացության, որ երեք զուգադրվող լեզուներում կան բառային իմաստի բնույթով պայմանավորված եզականաձև բառերի առանձին խմբավորումներ, որոնք թվակարգային հայեցակետի նկատմամբ չեզոք են, չեն առնչվում մեկ և մեկից

⁷ Степ Гак В. Г. Русский язык в сопоставлении с французским. Учебное пособие. 1975. С. 23.

ավելի գոյականների քանակային հարաբերակցության հետ, հոգնակիի համապատասխան ձևեր չեն կազմում, հետևապես անհոգնական են: Դրանք սովորաբար չթվարկվող գոյականների անուններ են, հավաքականություն, վերացականություն, նյութայնություն, անհատականություն արտահայտող գոյականներ⁶: Սա նշանակում է, թե եզականաձև բառերի շարքում կան այնպիսիները, որոնք հոգնակի ձևեր են կազմում գործառական համարժեքությամբ, և որոնց կարելի է անվանել *հոգնական* (հոգնակի կազմով) *եզակիներ*: Կան և այնպիսիները, որոնք գործառական համարժեքությամբ հոգնակի ձևեր չեն կազմում, որոնք էլ կոչվում են *անհոգնական եզակիներ* զուգադրվող երեք լեզուներում:

Սակայն թվակարգային հայեցակետով ըստ էության անհոգնական եզակի լինել չի կարող. եզակին հենց նրա համար է եզակի, որ ունի հակադիր հոգնակի եզր, հոգնակիի տեսանկյունից է եզակի: Բնականաբար գոյականի թվի իմաստագործառական առանձնահատկությունները լավ հասկանալու համար պետք է դիտարկել եզականաձև և այն միավորները, որոնք համապատասխան հոգնակի ունեն, և նրանք, որոնք համապատասխան հոգնակի չունեն, անհոգնական են, ընդ որում անհոգնականության հիմունքների պարզաբանումը ևս գիտականորեն կարևոր ու անհրաժեշտ է այս պարագայում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ասատրյան Մ.Ե.*, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հատոր Ա, Երևան, 1970, էջ 107-137:
2. *Պետրոսյան Յ.Զ.*, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, 453 էջ:
3. *Ջահուկյան Գ.Բ.*, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989:
4. *Гак В.Г.*, Русский язык в сопоставлении с французским. Учебн. пособие. М., "Русский язык", 1975.
5. *Allan K.* Nouns and Countability, Language, 1980, pp.541-567.
6. *Furnish Bob*, "Write Right" An English Handbook, Bloomington, 1996, pp.15-27.
7. *Laycock Henry*, Encyclopedia fo Language and Mass nouns, Count nouns and Non-count nouns Linguistics, Oxford, 2000, 1541 p.
8. *Patric Svensson*, Number and Countability in English Nouns, Swedish Science Press, 1998, pp.143-146.
9. *Sharvy R.*, Maybe English has no count nouns, Studies in Language, 2, 1978, pp.345-365,
10. *Comri B.*, Universali del linguaggio e tipologia linguistica, Il Mulino, Bologna, 1983, 640 p.
11. *Cook V.J.*, La grammatica universale, Il Mulino, Bologna, 1990 pp.80-123.
12. *Dardano M., P.Trifone*, Grammatica italiana, Zanichelli, Bologna, 1999, 930 p.
13. *Renzi L.* (a cura di), Grande grammatica italiana di consultazione, Mulino, Bologna, 1988, 680 p.
14. *Serianni L.*, Il problema della norma nell' italiano contemporaneo, in Annali Universita' per stranieri, Perugia, pp.47-69.
15. *Serianni L.*, La lingua italiana tra norma e uso, in Marcello. Mondelli (a cura di), 1991, pp.37-51.
16. *Trifone P.*, Grammatica italiana di base, Bologna, Zanichelli, Palermo, 2000, 324 p.

⁶ Stbu' Dardano M.P. Trifone, Grammatica italiana, Zanichelli, Bologna. 2006. P.170.